ԴՈՒՌԸ

Արմէն Հախնազարեան

Հորիզոն 2020



ԴՈՒՌԸ

Հեղինակ՝ Արմէն Հախնազարեան

«Հորիզոն»-ի բացառիկ յաւելուած

«ՀՈՐԻԶՈՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
ՄՈՆԹՐԷԱԼ
2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դուռը..... 4
Որպէս յաւելուած..... 12
Արմէն Հախնազարեան..... 13
Սամուէլ Կարապետեան..... 14
Այցելութիւն Դռան..... 15

Սոյն յաւելուածը նուիրուած է
Արմէն Հախնազարեանի ու Սամուէլ Կարապետեանի
յիշատակին

Յաւելուածի հովանաւորներ՝
տիար Վարուժ Շիթիլեան և բժ. Հովիկ Շիթիլեան

Խմբագիր՝ Վրէժ-Արմէն Արթինեան
Պրպտող և թարգմանիչ՝ Յարութիւն Շիթիլեան
Շարագրող՝ Սոնա Թիթիզեան
Էջադրող և ձևայղացք՝ Քրիստափոր Միքայէլեան

Les Publications arméniennes (1991)
3401 Olivar-Asselin
Montréal, Québec
H4J 1L5

ISBN 978-2-9806031-2-9

Dépôt légal - Bibliothèque et Archives nationales du Québec, 2020



ԴՈՒՌԸ

1975, Թեհրան: Տարեվերջը մօտենում է, մօտենում են տօնական օրերը եւ իրար վրայ դարսւում հասած շնորհաւորականները, զարդարուած թանկարժէք տպագրութեամբ եւ ընդամէնը ձեռագիր մի տող,մի ստորագրութիւն: Արդի աշխարհում յարաբերութիւնների մի ձեւ, տարին մի անգամ կրկնուող սովորութիւն՝ ասել ցանկանալով.– Քեզ դեռ չենք մոռացել...

Կան նաեւ բացառութիւններ էլ, օրինակ այս մէկը՝ Աթաթուրքի նամակաղրոշմը ճակատին, Պոլսից:

Բացում եմ ծրարը: Բարակ թղթի վրայ մեքենագրուած երկու էջ եւ երկու փոքր սեւ-ճերմակ պատկերներ ծալուած թղթերի մէջ:

Նամակ ստորագրողը տիկին Ռիխտերն է: Նա պատմում է իրենց հարեւանութեամբ ապրող հանգստեան կոչուած բարձրաստիճան զինուորականի մասին, որը իր զաւակի հետ յաճախ որսի է գնում Սասնոյ անտառապատ լեռները: Այդ զինուորականը՝ գեներալ Իլի Սահիդը տեղին ծանօթ է իր ծառայութեան տարիներից եւ գիւղերում ունի իր կապերը:

Այդ տարի Թենքիթ (Տնգետ) գիւղի ռեսը լուր էր ուղարկել. «Մի հսկայ արջ է Մալաթօ դաղից (Մարութա սար) մեր կողմերում երեւացել, որը շարունակ վնասներ է հասցնում մեր գիւղին: Բէյ՝ սպասում ենք քեզ, ազատիր մեզ այս չարիքից»:

Հայր ու որդի մեկնում են, բայց ուշացած: Մշոյ շրջանում բռնւում են ձմեռնամուտ բուք ու բորանի, խառնւում ձիան մէջ, ճամբան կորցնում ու մի կերպ իրենց հասցնում առաջին գիւղին՝ Հիրգիթին (Հերկերտ):

Օրեր ռեսի տանը մնալուց յետոյ, երբ փոթորիկը դադարում է, իրենց մեքենան մարդ ու ջորու օգնութեամբ հրելով, քաշելով ձիան միջից հանում հասցնում են մայրուղի եւ վերադառնում Պոլիս:

Նրանք ռեսի տանը չորս օր վայելում են թոնրի հացն ու քնաբեր տաք քուրսին, ակնատից հետեւում անընդհատ իջնող փաթիլներին, իսկ գիշերները մինչ լոյս քորւում՝ ոջիլի դէմ անյոյս պայքարում...

Երրորդ օրը, ռեսը մի քանի կցկտուր ակնարկներից յետոյ բացում է իր համարձակութեան կծիկն ու քաշքշուելով քաղաքից եկածներին վստահելով ուղեկցում է նրանց ախոռին կից մառանը, ուր դարմանի տակ «Էսկի մալն» (հին առարկան) էր թաքցրել՝ դուռը:

«Բէյ, ի՞նչ անենք, կափին (դուռը) մեծ է ու ծանր եւ Իստանբուլ տանելն ու ծախելը վտանգաւոր: Ժանդարմերը ճամբին յաճախ քննում են եւ հնութիւն տեսնելուց նեղացնում: Եղբայրս Սվազի շուկայում է, միւս տղաս էլ՝ Ստանբուլում: Մտածում ենք՝ որ այս նախշերի համաձայն սղոցենք, մաս մաս անենք եւ դրսից եկած թուրիստներին ծախենք: Ի՞նչ էք խորհուրդ տալիս, վիճակներս վատ է, փողի շատ կարիքն ունենք»:

Հայր ու որդի իրար են նայում:

Երկփեղկանի, սեւին տուող դուռը իր բարձրաքանդակներով մարագի կիսամութի մէջ խորհրդաւորութիւն էր փոխանցում:

«Գիտէք՝ աղա,– վերջապէս ցածր ձայնով խօսում է զինուորականի զաւակը՝ Իստանբուլում մեր հարեւանը ալեման (գերմանացի) է եւ իր տանը հին-մին ապրանք ունի հաւաքած: Նախքան մասերի բաժանելը նկարենք, իրենց ցոյց տանք գուցէ նա հաւանի, գնի: Սպասէք, դեռ ձեռք մի տուէք, արժէքը կը պակսի»,– աւելացնում է հայրը:

«Արժէքը կը պակսի՞, լաւ, կը սպասենք ձեր լուրին բէյ»,– դուռը նորից ծածկում է դարմանով:

«Ուրեմն, պարոն Հախնազարեան, ուղարկում ենք ձեզ մեր հարեւանի նկարած պատկերները: Քրդերի դրան համար ցանկացած գումարը մօտաւորապէս հինգ հազար մարկ է անում: Ի՞նչ է ձեր կարծիքը, մեզ թւում է, որ արժէքը բարձր է»:

Երկփեղկանի դուռը անկասկած մի հայ եկեղեցու է պատկանել, եւ ինչքան փոքր ու անորակ են պատկերները, այնուամենայնիւ մէկի վրայ տեսանելի են փորագրուած տառեր, որոնք ընթեռնելի չեն:

Կարդում եմ նամակը՝ մէկընդմէջ խոշորացոյցով նկարների թեքուած: Անսպասելի տենդով բռնուած, նոյն օրն իսկ պատասխանում եմ երկտող գրութեամբ, որ դուռը հայկական է: Մի կերպ Մշոյ շրջանից փոխադրէք Պոլիս: Սպասում եմ ձեր լուրին:

Հարցերը շատ են: Արդեօք ո՞ր եկեղեցու եւ ո՞ր թուականի դուռ է: Պարզ է, որ գիւղի սովորական եկեղեցու դուռ չի:

Ապրիլին ստանում եմ պարոն Ռիխտերի ուղարկած ծրարը՝ Սինանի շէնքերին նուիրուած հատորը: Թերթում եմ ծագումով հայ ճարտարապետի գիրքը եւ առաջին էջերի արանքում գտնում շատ բան չասող Զատկական տօները շնորհաւորող մի բացիկ: Բայց տողերի մէջ թաքնուած շատ բան ասող մի բան՝ Չենգիլի...

Կարդում եմ նորից ու նորից, ինձ համար անհաւատալի է, որ իսկապէս դուռը Չինգիլիինն է, այնտեղից քանդուած, բերուած: Ուղղակի չեմ կարողանում հաւատալ:

Չինգիլի անունը իմ մէջ արթնացնում է անկրկնելի ապրումների, յուշերի ծով, որոնք կապուած են տարիներ շարունակ Արեւմտահայաստան կատարած ճամբորդութիւններիս հետ: Ճամբորդութիւններ մեր ճարտարապետութեան հետքերով՝ անվերականգնելի կորուստներից փշուրներ փրկագործելու: Թէկուզ մի պատկեր, թէկուզ մի մատուռի չափագրութիւն եւ նորից մտքով քայլում եմ ամցեալի ճանապարհով, կանգնում ձորապռնկին՝ շունչ առնելու եւ ապրում եմ իմ մէջ յուսահատութեան անդունդը...

1976-ի մայիսին ստանում եմ Պոլսից Ռիխտերի ստորագրութեամբ եւս մի բացիկ՝ ...Ձեր Եւրոպայի յաջորդ ճամբորդութիւնը Իստամբուլում ընդհատեցէք եւ մի քանի օր մեր հիւրը եղէք: Բոսֆորի գարունը աննման է: Շեշտը աննմանի վրայ է...

Քաղաքից մօտ կէս ժամ հեռու Եշիլքոյ օդակայանում ինձ դիմաւորեց պարոն Ռիխտերը:

Հայոց պատմութեան մէջ տեղ գտած Սան Ստեֆանօ յունական գիւղը այսօր անուանափոխ եղած Եշիլգիւղն է: Մի անուն, որ անմիջականօրէն կապուած է Խրիմեան Հայրիկի շերեփին եւ հայկական հարցը որպէս աճուրդի դրուած ճշմարտութիւն՝ յօդուած 16-ին, որը Բերլինում վերածուեց 61-ի...

Երկուսս էլ գիտենք խնդրոյ առարկան եւ թէ գալուս պատճառը ինչ է, սակայն օդակայանի ճամբին, մեքենայում ոչ մի ակնարկ չի արւում, սպասում եմ որ ինքը խօսքը բացի:

Հասնում ենք Բոսֆորի ափին գտնուող իրենց եռայարկ տունը: Մուտքի բաժնում, հիւրասենեակում քօղարկուած անհամբերութեամբ աչքի եմ անցկացնում եղածը՝ ուր հնաբոյր իր շատ կայ, բայց ոչինչ անսովոր: Ինձ ուղեկցում են հիւրի սենեակը, ուր տեղաւորում եմ ճամպրուկս ու իջնում թէյի:

Նստած ենք պատշգամբում, բաժակները դատարկուել են նաեւ քաղաքավարական հարց ու պատասխանները:

Պարոն Ռիխտերը տեղից դանդաղ բարձրանում է եւ խորհրդաւոր ցած ձայնով ասում՝ գնա՛նք:

Դուռը բացում է, ներս հրաւիրում: Փոքր ննջասենեակ, բարձր ճերմակ պատեր, փայտէ յատակ, անկողինը ճերմակով ծածկուած, մի աթոռ, մի խաչ պատին յենուած ճերմակ սաւանով ծածկուած մի թեքութիւն: Դուռը փակում է, դանդաղ ու անձայն հաւաքում, ծալում է սաւանը: Սեւին տուող փայտէ երկփեղկանի դուռը, շօշափելի մօտիկութեամբ իմ առջեւումս է: Ինձ համար մի հրաշք: Կոտորածից ազատուած մի բուռ մշակոյթ...

Դրան փեղկերը չորս կողմից շրջանցում է երկրաչափական զարդագօտին, որին յաջորդում է աւելի լայն բուսականը: Նոյն զարդագօտիներով դռների մակերեսը չորս մասերի

են բաժանում, ներքեւիններեր եւ վերի երկուսը քառակուսի են, իսկ երկրորդը միւսներից աւելի նեղ ու քառանկիւնի: Յիշուած ութը բաժանումները շրջանցում են ոլորապտոյտ երիզով:

Երկու դռների երեքական քառակուսիներում քանդակուած են բարդ ու գեղեցիկ նախշուններ: Աջինը ունի երկրաչափական իսկ ձախինը բուսական զարդաձեւեր:

Փեղկերի կենտրոնում գտնուող քառակուսիները շեշտուած են կլոր ծաղկազարդ հիւսուածքով՝ անկիւններին երկու հրեշտակ, թռչուն ու կենդանիներ: Այս բոլորը յիշեցնում է խաչքարերի ներքեւում եղած կորիզն ու կեանքը խորհրդանշող յաւերժականութիւնը:

Դրան զարդը սակայն, երկու քառանկիւններում քանդակուած Առաքեալներն ու Աւետարանիչներն են կանգնած վիճակով: Ձախում եօթը Սրբեր, որոնցից հինգը իրար նման են, իսկ երկուսը աւելի փոքր, որոնցից մէկը Յիսուսի մկրտութիւնն է ներկայացնում Սուրբ Հոգու նշանը վրան: Աջում չորս Առաքեալներն են փոքրիկ սիւներով իրարից բաժանուած՝ Պետրոսը բանալին ձեռքին, Պօղոսը սուրով:

Պատմութիւն բուրող գեղեցիկ քանդակներին աւելանում է հայկականութեան կնիքը՝ արձանագրութիւնը որ գտնւում է փեղկերի ճակատին եւ ներքեւում, մեծ մասամբ լաւ ընթեռնելի:

Դրան կողպէքի մասը լրիւ ջարդուած է, եւ գնդակներով ծածկուած: Դռների վերի մասում եւ ներքեւում կան մեխերի առաջացրած կոպիտ ֆասներ:

Արձանագրութիւններն են.

Աջ կողմի դրան ճակատին՝
ՇԻՆԵՑԱՒ ԴՈՒՌՍ ՍԲԿԱՐՊ..ԻՍ ՁԵՌԱՄԲ ՊԱՐՈՆՍ ՄԱՐԿՈՍԻ

Աջ կողմի դրան ներքեւում՝
ԻԹՎ. Հ. : ՁԿԱ (1512) ..... ՇԱՄԱԿԻՒՐԵԻ... ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

Ձախ կողմի դրան ճակատին՝
ԵՒ ՈՐԴՈՒՆՈՐԱ ՊԱՐ(Ն)ՈՆ ՄԻՐԱՊԵՏ ԱՒ ԱՄՁԱՏԻՑ

Ձախ կողմի դրան ներքեւում՝
ԵՍ ՍԱՐԵՊԻՆՈՐԿԱՁՄԵՑԻ.....

Արձանագրում եմ արագ, ոտքի կանգնում, թուղթը գրպանս դնում: Դուռը նորից ծածկուում է ճերմակ սաւանով: Իջնում ենք: Ընթրիքը պատրաստ է: Մատուցարարուհին գալիս գնում է, ուտում ենք, կարծեմ համեղ բաներ, բայց միտքս ուրիշ տեղ է, խօսակցութեան միակ նիւթը դուռն է:

«Ուրեմն ձեզ պատմեմ»: Անձեռոցիկը թեթեւ բերնին տանելուց յետոյ սկսում է պարոն Ռիխտերը.– «Չէք կարող պատկերացնել, ի՞նչ դժուարութիւններով դուռը, տնային ապրանքների տակ ծածկուած, գիւղից հասաւ քաղաք, եւ գիշերով, ոչ թէ մուտքից այլ պարտէզի կողմից, ուր պատը նորոգուում էր, մի կերպ ներս բերեցին: Գիտէք՝ մեր միւս հարեւանը Հիւրիյէթ թերթի խմբագիրն է, պիտի շատ զգոյշ լինենք, հասկանալի է, չէ՞»:

«Լաւ, մինչ այստեղ յաջողեցինք, սակայն մեր տանը պահելն էլ հարց է, կարող է մեզ համար էլ վտանգաւոր դառնալ: Սա հնութիւն է եւ որպէս այդպիսին համարուում է ազգային հարստութիւն, եւ երկրից դուրս տանելն էլ արգելուած է»:

Երբ վճարուած գումարը փոխանցելու մասին ակնարկեցի, մի փոքր լռութիւնից յետոյ

տիկին Ռիխտերը ասեց «Գիտէք՝ մենք վճարել ենք սիրով, թողնենք այսպէս մնայ, քանի որ առայժմ մեզ մօտ է, եւ մենք ենք իր գեղեցկութիւնը վայելում, իսկ եթէ ձեր օգնութեամբ հնարաւոր եղաւ երկրից դուրս տանել, այն ժամանակ առաջնահերթութիւնը ձերն է, մի բան կը մտածենք...»:

Ուշ էր, երբ սենեակս բարձրացայ, պառկեցի, բայց քունս չէր տանում: Դուրս եկայ պատշգամբ, նստեցի: Լուսնի լոյսով մի քանի ձկնորսական նաւակների ստուերներն էին երեւում հեռուում, միջոցը խաղաղ էր, հազիւ լսելի էր թեթեւ ալիքների հանդարտութիւն փոխանցող ձայնը: Իմ մէջ փոթորիկ էր: Օրուայ դէպքերն ու անցեալի ապրումները իրար հրելով հրմշտկելով նոր հարցեր էին առաջացնում, ինձ տակնուվրայ անում:

Այսօր Թուրքիայում Չենգիլի (քրդերէն զանգակաւոր) կոչուող վայրը, նշանաւոր Սուրբ Կարապետի վանքն է...

Սուրբ Կարապետի վանքը գտնւում է Մուշ քաղաքի հիւսիս արեւելքում՝ մօտ 35 քմ հեռու:

Յիշում եմ, արեւածագից առաջ Մուշից դուրս եկանք դէպի հիւսիս՝ Գառնեն (Քարնի) գիւղից, յետոյ կտրեցինք Մեղրագետը (Քարասու), անցանք միւս կողմում Խոպերը (Հոփեր) գիւղը, որտեղից թեքուեցինք արեւմուտք եւ անցանք Գոմս (Քիւմուս), Փալաս (Փալաս), Տոմ (Դոմ), Զիարեթ (Ցիարեթ) դարեր հայաբնակ այսօր քրդաբնակ գիւղերից: Հողէ ճամբան՝ երկու օր առաջ տեղատարափ անձրեւների պատճառով յաճախ անանցանելի էր: Սխալմամբ հասանք Դերսիմ եւ այնտեղից ուշացած վերջապէս Սորդար (Սորդաք): Մեքենան ապսպրանքներով թողեցինք մէյդանի թէյատան մօտ, թէյ խմեցինք ու երբ ուզում էինք Սուրբ Կարապետի վանքը՝ Քարքէ լեռը բարձրանալ, մեր քուրդ վալադը փորձում էր մեզ համոզել, որ չգնանք, թէ «Չանգիլիում ապրողները վայրենի քրդեր են, մեզ պէս հօ չեն...»:

Առուակն ու իրար փաթաթուող սարափէշի բարակ ճամբով բարձրանում ենք, մի կողմում լերկ ժայռեր, միւսում ձորեր, ձորակներ՝ շագանակի եւ ընկուզենու ծառերով:

Ժամեր բարձրանում ենք մոմերի հետքերով, նուիրականացած քարեր ամէն կողմում: Վերին սարահարթի բարձունքում Մուշեղ Մամիկոնեանի աւերակուած բերդն է, միւս կողմում նրա դիմացի ժայռը «Աղջկանց քարն» է: Ինչքան բարձրանում ենք, այնքան աւելի յաճախ ենք անցնում սօսիների պուրակներից: Սօսին հեթանոս Հայաստանի խորհրդանիշն էր: Հայերը ռազմի դաշտ էին իջնում սօսին պատկերող դրօշակներով: Գողթանի Սօսին 2600 տարեկան է, որի շուքի տակ Մեսրոպ Մաշտոցը հայերէն տառերի գիւտն արարեց:

Ընդհանրապէս հայկական վանքերը թաքնուած են սարերի յետեւում, ձորերի մէջ: Սուրբ Կարապետ լերան գագաթին է չորս կողմից տեսանելի, եւ բարձր, այնքան բարձր որ կարելի է Աստծուն մօտ լինել...

Գլակավանք:

Իննակնեան վանք:

Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ:

Այս անուններով է ճանաչուած հայ հաւատքի հնագոյն սրբատեղիներից մէկը՝ իր նշանակութեամբ երկրորդը Էջմիածնից յետոյ:

Ինչպէս քրիստոնեայ հնագոյն եկեղեցիներից շատերը, սա եւս հեթանոսական կործանուած տաճարի վրայ է կառուցուել: Գիսանէ եւ Դիմիտր կուռքերի մեհեանն է եղել այստեղ, որը կործանել է Գրիգոր Լուսաւորիչը՝ հիմնելով այս վանքը, այստեղ զետեղելով Սուրբ Կարապետի եւ Աթանգինէ եպիսկոպոսների նշխարները:

Առաջին վանահայրը Զենոբ Գլակն է եղել: Գրիգոր Լուսաւորչի աջակիցը, որի անունով էլ կոչուել է Գլակավանք:

Վանքը ունէր բազմաթիւ մշտահոս աղբիւրներ, որոնցից նշանաւորը ոչ շատ հեռու դէպի հիւսիս Աւագ ակն էր, ապա Լուսաւորչի աղբիւրը, Բարեհամը եւ Ականակիտը՝ ինը

կողք-կողքի բխող աղբիւրներ, որոնց պատճառով էլ վանքը կոչուել է նաեւ Իննակնեան վանք:

Պատմութեան ընթացքին վանքը շատ անգամներ աւերուել է եւ նորից վերակառուցուել:

7-րդ դարում վանքը երկրաշարժից հիմնովին աւերուել է, որից յետոյ կառուցուել է նրա գլխաւոր եկեղեցին՝ Սուրբ Ստեփանոսը: 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին վանքում կառուցել է տուել ապարանք մը, որը սակայն այրուել է 1058 թուին Սուրբ Գրիգոր փայտակերտ եկեղեցու հետ:

1750 թուին թուրք-պարսկական պատերազմների ժամանակ վանքը թալանուել եւ եկեղեցին այրուել է:

Յովսէփ Էմինի ազատագրական պայքարի ընթացքին՝ 18-րդ դարու կէսին, վանքը Յոփսան վանահօր հովանաւորութեամբ հանդիսացել է կարեւոր քաղաքական կենտրոն: 1784-ի երկրաշարժը նորից աւերում է եկեղեցին: Վանքի տարբեր մասերը հիմնովին վերակառուցւում են 1788 թուին, ընդարձակելով գաւիթը, նորոգելով զանգակատունը, վանականների խուցերը, գրչատունը, պարիսպները, եւ այլն:

Վանքի համալիրը բաղկացած էր մենաստանից եւ եկեղեցուց, որոնք շրջապատուած էին բարձր պարիսպով: Միաբանների երկյարկ բնակարանները պատով անջատուած էին ուխտաւորների սենեակներից: Վանքի մաս էին կազմում գրապահոցը, սեղանատունը, տնտեսական բաժինը եւ այլն:

Եկեղեցին քառակուսի յատակագծով մի ամբողջութիւն էր: Ունէր 16 սիւնանի դաս, արեւմուտքից 1782-ին կառուցած նախամուտք զանգակատուն, իսկ արեւելեան հատուածը բաղկացած էր իրար յաջորդող չորս եկեղեցի-վկայարաններից՝ կենտրոնում երկու գմբեթածածկ եկեղեցիներ,իսկ միւս երկուսը միանաւ բազիլիկներ:

Եկեղեցու արեւմուտքում մարմարէ ութը սիւների վրայ զանգակատունն էր, որը դարեր շարունակ իր ղօղանջի օրհնութիւնն էր փռել Արածանի սրբազան գետով ակօսուող Մշոյ լայնարձակ դաշտի վրայ:

Սուլթան Սուրբ Կարապետը հայութեան ամենասիրուած ուխտատեղիներից է եղել, Վարդավառի եւ Աստուածածնի տօներին երկրի ամենահեռաւոր ծայրերից իսկ ուխտաւորների քարաւաններ են եկել դէպի այս սրբավայրը եւ ժողովրդական մեծ հանդիսութիւններ են կայացել վանքի բակում եւ վանքի շուրջը. ձիավարժութիւն, խաղեր, երգեր ու տաղ, գուսանների մրցութիւն: Բուժիչ զօրութեան համբաւով ծանր հիւանդներ եկել են վանք եւ առողջացած վերադարձել... Հապա «ճաշը»: Վանքի ճերմակ եզներից մէկը մատաղ էին անում, մեծ ղազաններում ճաշ պատրաստում եւ ռամիկից իշխան՝ մի պնակ ուտում եւ այդ օրը Աստծու տանը մէկ էին լինում: Հաւասարութիւն խորհրդանշող հրաշալի մի երեւոյթ:

Այս տողերը գրելուց, յիշում եմ Սուրբ Թադէոս Առաքեալի վանքի ուխտագնացութեան ներկայ օրերի այն գոհեմիկ տեսարանը, երբ մատաղի հասկացողութիւնը սահմանափակւում էր մորթելու մէջ...

Սուրբ Կարապետի վանքը եղել է դարեր շարունակ գիտութեան եւ գրչութեան կենտրոն, եղել է հայութեան հոգեւոր ուժի ակունքներից եւ դա զգալով է որ յաճախ թշնամիների կողմից թիրախ է հանդիսացել:

1822 թուին դարձեալ վանքը ենթարկուեց յարձակման, կողոպտուեց եւ ոչնչացուեցին մեծարժէք շատ ձեռագրեր:

1863 թուականին հոգեւոր հովիւ նշանակուեց Խրիմեան Հայրիկը: Նա Վարագայ վանքից Սուրբ Կարապետի վանք տեղափոխեց տպարանը եւ այստեղ իր աշակերտ Գարեգին Արք. Սրուանձտեանի հետ սկսեց հրատարակել «Արծուիկ Տարօնոյ» ամսագիրը:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, այս վանքը Արեւմտեան Հայաստա-

նի հոգեւոր եւ ազգային խոշոր օջախներից էր: Այստեղ գործում էր «Ժառանգաւորաց» գիշերօթիկ դպրոցը, որը 80 աշակերտ ունէր: Արեւմտահայաստանի շատ բնակավայրերի դպրոցների հիմնադիրները այս դպրոցի շրջանաւարտներն են եղել:

1915 թուականի Մեծ Եղեռնի օրերին հալածուած հայերի մի մեծ բազմութիւն էր ապաստանում վանքում եւ նրա շրջակայ անտառներում: Թրքական կանոնաւոր զօրքն ու քուրդ հրոսակախմբերը յարձակւում եւ շրջապատում են վանքը, սակայն դիմադրութեան են հանդիպում, որը տեւում է շուրջ երկու ամիս: Այդ ժամանակամիջոցում վերջին վանահայր Վարդան վարդապետը իր երկու գործակիցների հետ հասցնում են վանքի ձեռագրերն ու արժէքաւոր իրերը երեք թաքստոցներում թաքցնել: Թրքական զօրքը թնդանօթներ է բերում, վանքը ռմբակոծում, մի քանի տեղից պարիսպը աւերում ու թալանի տենչով ներս մտնում: Ահաւոր էր կոտորածը, եւ պաշարուածների շատ փոքր մասն է կարողանում փախչել, որոնցից միայն մի քանիսն են հասնում Արեւելեան Հայաստան: Նրանց մէջ էր վանքի ուսուցիչ Յակոբ Դանիէլեանը, միակ կենդանի վկան որը գիտէր թաքցրած ձեռագրերի տեղը: Մի մարդ որ իր կնոջ ու երկու զաւակների փրկութեան գնով իսկ ձեռագրերի տեղը չմատնեց:

1916 թուականին, երբ ռուսական բանակի յառաջապահ՝ հայ կամաւորականները գրաւում են Մուշը, Կաթողիկոսի նշանակած յատուկ յանձնախմբով Յակոբ Դանիէլեանը գալիս է Մուշ՝ Սուրբ Կարապետ վանքի թաքցրած հարստութիւնները տեղափոխելու նպատակով: Թուրքերը քանդել էին իրենց ենթադրած տեղերը, պայթեցրել էին վանքի երեք գմբէթները եւ գտել ու թալանել երկու գաղտնարաններ: Բարեբախտաբար ձեռագրերի եւ իրերի առաւել արժէքաւոր մասը երրորդ գաղտնարանումն էր, որը չէին գտել (Գրական թերթ, 1-1-1990): 1750 արժէքաւոր ձեռագրեր՝ ինչպէս Հեթում թագաւորի Աւետարանը, Քրիստոսի ոսկեձոյլ Աջը, նաեւ վանքի գանձարանը տեղափոխում են Էջմիածին, փրկում:

Մօտ երեք ժամ քայլում ենք, թւում է, որ շուտով պիտի տեղ հասնենք: Տարբեր կողմերից գլգլացող առուակներ են վազում: Չգիտեմ, որը որն է: Ենթադրում եմ՝ ահա այս մէկը, որ սարալանջի արեւմտեան կողմով է հոսում, Լուսաւորչի աղբիւրից է, որի ջուրը երկու կամարների տակից գալիս լցւում էր Տրդատ թագաւորի քարէ աւազանի մէջ, ուր Գրիգոր Լուսաւորիչը շատերին էր կնքել:

Ճամբի աջ կողմում մի ուրիշ աղբիւր կայ: Չոքել ենք, խմում: Երեւի սա էլ Բարեհամի ակն է, իսկապէս համեղ ջուր, որից կշտացողը հիւանդ է...

Անցնում ենք անթիւ փորուած, քար ու քանդ եղած գերեզմանների մօտից, ո՞վ գիտէ, (մի գուցէ) Սմբատ սպարապետի եւ իր զաւակ Գայլ Վահան Մամիկոնեանի ջարդուած տապանաքարերն են:

Հասնում ենք լերան գագաթին նստած Սուրբ Կարապետի վանքին՝ այսօր հսկայական մի աւերակոյտ:

Քարը քար է, բայց երբ տաշում են յղկում, քանդակում, սկսում է խօսել, պատմել նոյնիսկ երգել կամ բողոքել, բայց երբ քանդում են լաց է լինում...

Ապշած կանգնել ենք աւերուած յուշարձանի շեմին՝ մոկտացող ցաւը մեր մէջ, անելիքներս չգիտենք, ո՞րը նկարենք, ի՞նչը չափենք, երբ պարսատիկներից թռած մի քանի քարեր սուրալով անցնում են, մեզ սթափեցնելով եւ յիշեցնելով թէ ուր ենք մենք... Մեզ շարունակ հետեւում են աւերակներից դուրս նայող կասկածամիտ խոժոռ աչքեր՝ թէ ի՞նչ ենք նկարում, ո՞ւր ենք գնում, ի՞նչ ենք փնտռում: Ամենուրեք կոտրած քանդակազարդ քարեր, դէս ու դէն արձանագրութիւններ, հաստաբուն որմասիւների մնացորդներ: Դիմացի աւերակոյտում ինչ որ մի անցք: Դժուարութեամբ ներս եմ մտնում մութ խոռոչը, հաւանաբար մի մատուռ լոյսի գերանը միջում: Գանձախուզութեան հետքերը ամէն տեղ, բացուած փոսեր եւ ով զարմանք՝ հեթանոսական ակունքով պատեր՝ մեհենատեղի եղած լինելու անդառնալի փաստը... Մի ուրիշ տեղ կաւէ ոլորպտոյտ խողովակներ: Արդեօք տաք ջրի կամ գոլորշի փոխանցող

ներքին ջեռուցման բացառիկ մի նմոյշ: Վանքը ծովի մակերեսից շուրջ 2200 մետր բարձր լինելով ձմրան ցրտաշունչ ամիսներին պաշտպանուելու միջոցների կարիքը ունէր:

Թոնրի, թարմ հացի հոտն եմ զգում: Քուրդ մամիկը տրտունջը դէմքին ժպտում է, տաք լաւաշ մեկնում: Վերցնում եմ շնորհակալութեամբ եւ զգում եմ, որ շատ քաղցած եմ: Դրամ եմ մեկնում: Ինչ որ բան է ասում, չի վերցնում: Ծաղկահամ լաւաշը ուտում եմ եւ նկարելը շարունակում:

Աստիճանաբար քարերի շուաքը երկարում է, իրիկունը մօտենում, իսկ հեռում, ներքեւում մշուշածածկ Մշոյ դաշտում ոլորապտոյտ Արածանին է արծաթին տալիս:

Պատրաստուում ենք իջնել: Նորից խմում ենք Բարեհամ աղբիւրի ջուրը: Մթնոլորտը խաղաղ է, ձայն չկայ, կայ մեռեալ ամայութիւն, կայ գերեզմանուած հսկայ մի վանք, որի դամբանականը լռութիւնն է: Միայն լռութեամբ է կարելի այս անհամար փոսերը լցնել...

Նոյն ճամբով իջնում ենք. Դեռ լոյս է, բայց տժգոյն լուսինն էլ արդէն երկնքում է: Լուռ ենք: Մտածում եմ որ երջանիկ չի կարող լինել այն հողը որը իր մէջ այսքան զոհերի անարդարութիւնների գերեզմանուած պատմութիւն է թաքցնում, եւ մտածում եմ որ գուցէ դեռ երկար ժ ամանակ այս հարցը մերն է, իսկ հողը չծնուածներին...

Արշալոյսի առաջին գունատ լոյսը սթափեցնում է ինձ: Բարձրանում եմ տեղիցս: Պիտի ճամպրուկս հաւաքեմ, հասնեմ օդակայան: Խաղաղուել եմ եւ յոյսի բարակ մի շող եմ հեռում տեսնում...

Երկու շաբաթ յետոյ Թեհրանում դրան մասին տեսածս ու լսածս պատմում եմ հօրս եւ խնդրում իրեն որ միջնորդի, դոկտ. Ցինզերին նամակ գրի թէ ես մի հարցում իր խորհրդի կարիքն ունեմ:

Դոկտ. Ցինզերը գերմանական դեսպանատան մշակութային կցորդն էր, որը տարիներ շարունակ հինգշաբթի երեկոյեան հօրս մօտ գրաբար դասի էր գալիս, որից յետոյ էլ յաճախ մնում էր ընթրիքի: Նա մի քանի տարի էր, որ պաշտօնի բարձրացումով փոխադրուել էր Թուրքիա, Անգարա:

Զգում էի, որ հայրս տատանուում է, դժուարանում է գրել: Վերջապէս գրեց, որի պատասխանն էլ շատ արագ եկաւ: Դոկտ. Ցինզերը ինձ հրաւիրում էր Անգարա, եւ խոստանում օգտակար լինել: Անշուշտ դեռ խնդրանքս չգիտէր...

Նոյն տարի սեպտեմբերին, հայկական բերդերի հետքերով գիտարշաւ էի ծրագրել դէպի Կիլիկիա, որը պատեհ առիթ էր նաեւ Անգարայից անցնել:

Նշանակուած օրը, դոկտ. Ցինզերը օդակայանում էր, եւ քիչ յետոյ միասին էինք մեծ պարտէզով շրջապատուած իր փառահեղ տանը:

Մանրամասն կերպով իրեն պատմեցի Սուրբ Կարապետի վանքի եկեղեցիներից մէկի դրան պատմութիւնը: Լսեց առանց ընդմիջումի եւ, երբ խօսքիս վերջում զգուշօրէն մօտենում էի բուն առաջարկիս, կռահեց, ընդհատեց ինձ եւ կտրականապէս մերժեց ասելով.– «անհնարին է, դա մաքսանենգութիւն է»...

Յոյսի փոքր ակնատն էլ փակուեց: Տխուր էի շատ, բայց ոչինչ անել չէի կարող:

Յաջորդ օրը, ըստ նախօրօք ծրագրուածին, հանդիպեցի Գերմանիայից եկած երկու ճարտարապետների, եւ միասին մեկնեցինք Ատանա:

Ամիսներ յետոյ, այս անգամ Վիեննայից ուղարկուած երկար նամակով պրն. Ռիխտերը ուրախութեամբ տեղեկացնում էր, որ դոկտ. Ցինզերը Պոլիս կատարած մի ճամբորդութեան ժամանակ, հեռախօսել է իրեն եւ ցանկութիւն յայտնել դուռը տեսնել:

Նա գրում է, թէ ինչպէս դոկտ. Ցինզերը երկար նայել է դրանը եւ առանց իսկ մի հարց տալու ասել.– «լաւ, մի ելք կը գտնենք...»

Ուրախացած անմիջապէս պատասխանում եմ այս նամակին, մտածելով որ յոյսի նշոյլ կայ, եւ գուցէ նոյնիսկ առեւանգուած դուռը տունդարձի ճամբին է...

Նամակս մնում է անպատասխան, մտահոգ եմ: Մի քանի ամիս յետոյ ուղարկում եմ եւս մի նամակ: Սա էլ է անպատասխան մնում:

Այս լռութիւնը անսովոր է: Կանխազգում եմ ինչ որ վատ բան:

Աւելի քան մի տարի յետոյ, բոլորովին անսպասելի ստանում են լակոնական ոճով մի գրութիւն: Տիկին Ռիխտերը յայտնում է, որ իր ամուսինը վախճանուել է, եւ ինքը փոխադրուել է Գերմանիա՝ Միւնխեն քաղաքին մօտ գտնուող արուարձանը եւ վերջում մի կարճ նախադասութեամբ յայտնում է, որ դուռը գտնուում է Գերմանիայում...

Մեկնում եմ Միւնխեն, եւ ըստ ժամադրութեան հանդիպում եմ տիկին Ռիխտերին, իր փոքր, սեղմուած բնակարանում:

Իրեն շատ փոխուած, ընկճուած եմ տեսնում: Պատմում է ընդհատումներով, աչքերը սրբելով:

«Պարոն Ցինզերը մեզ իրապէս շատ օգնեց: Ամուսինս դուռը դժուարութեամբ հասցրեց Անգարա, որտեղից նա որպէս դեսպանատան բարձրաստիճան պաշտօնեայ, իր անձնական ապրանքների հաշուին փոխադրել տուեց Գերմանիա եւ այժմ Ֆրանկֆուրտ քաղաքում, մի պահեստանոցում է»:

Տիկին Ռիխտերը շարունակում է պատմել:

«Յիշում էք չէ՞, Պոլսում, մեր տանը աշխատող մատուցարարուհին: Վաղուց էր որ նկատել էինք, մեր տնից ինչ որ բաներ սկսել են պակսել: Երկար տեւեց բայց կարողացանք ստոյգ հաստատել որ նրա ձեռքը մաքուր չէր եւ իրեն վտարեցինք:

«Անցնում է մի քանի օր, երբ բոլորովին անսպասելի չորս ոստիկաններ են մեր տուն գալիս եւ առանց շատ բան ասելու մեզ ձերբակալում, տանում են բանտ, իսկ մեր ունեցածն էլ գրաւուած յայտարարում՝ մեզ զրպարտելով որ մենք հին եւ արգելուած իրերի առեւտուրով ենք զբաղուել: Պարզւում, որ թրքուհու խօսքը աւելի կշիռ ունի քան քառասուն տարուայ մեր անցեալը այս երկրում, ուր ամուսինս ճանաչուած էր որպէս օրինակելի անձնաւորութիւն: Անշուշտ սիրում էինք եւ հաւաքում որոշ հնութիւններ՝ յատկապէս բիւզանդական սրբապատկերներ, որոնցից մեր հիւրասենեակի պատերին շատ կար, բայց ոչ վաճառականական նպատակով:

«Բարեբախտաբար, դուռը այդ դէպքից օրեր առաջ տնից դուրս էր բերուել եւ ճամբին էր դէպի Եւրոպա»:

Տիկին Ռիխտերը շարունակում է.

«Ամուսինս բանտում սրտի իրար յաջորդող երկու տագնապներ է ունենում եւ վախճանւում է հիւանդանոցի ճամբին: Ինձ արձակում են բանտից, սակայն պարտադրում են միայն երկու պայուսակով թողնել երկիրը»:

Պատմում է, աչքերը սրբում եւ աւելացնում.

«Ստիպուած եմ դուռը վաճառել, միայն չգիտեմ ինչ արժէքով»:

Այդ հանդիպումը ինձ համար յոյսի եւ մտահոգութեան նոր դուռ է բացում...

Այդ օրուանից տարիներ անցան, բայց ես միշտ տարբեր առիթներով փնտռեցի գտնել մէկին, որ դուռը գնի եւ փոխադրի այնտեղ, ուր իր միակ արդար տունն է՝ Հայաստան:

Ինձ մտերիմ եւ բարեկամ մի անձնաւորութիւն՝ ժամանակին հետաքրքրուեց, սակայն իր խորհրդատուի սխալ միջնորդութիւնը խանգարեց, ուղիղ ճամբան շեղեց եւ տարիների հետեւողականութեամբ տարուած գործը մնաց ապարդիւն՝ ձախողեց:

Անցեալ տարի՝ 1996-ի աշնանը Լոնդոնում աճուրդի դրուեց մի բուռ հայոց պատմութիւն եւ մուրճի հարուածով Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի դուռը վաճառուեց անծանօթ օտարի:

Հեռախօսով լսում եմ Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանի յուսախաբ ձայնը. «Շատ նեղուած եմ, Արմէն, մերոնց զգուշացուցի, մերոնք հոն էին եւ ոչինչ չըրին: Դուռը ոչ հայ մէկը գնեց, չգիտենք ով...»:

Դժուար է հոգու աչքերը փակել եւ չտեսնել, չլսել եւ չյիշել, երբ յիշողութիւնը ամէն ազգի այն հոգեւոր թելն է, որով կարուում է նրա բարոյական զգեստը:

Դուռը, որը բացուում էր դէպի մեր հոգեւոր մշակութային ակունքները, մեզ համար մնաց փակ, եւ աճուրդի ճամբով գնաց օտարութիւն, իր հետ տանելով Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետին կապուած մեր պատկանելիութիւնը:

Գրել, աւարտել եմ դրան իմ պատմութիւնը: Նայում եմ պատուհանից դուրս, անձրեւից յետոյ պայծառ արեւ է, պարզ կապոյտ երկինք, բայց ես ամաչում եմ նայել երկնքին...

Արմէն Հախնազարեան
Ամիրն, Գերմանիա

Արմէն Հախնազարեան ճարտարապետ է, ամբողջ կեանքը նուիրած մեր ճարտարապետական յուշարձաններու, յատկապէս Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիոյ և հիմա նաև՝ Քելբաջարի տարածքին անտէր մնացած, թալանուող, քանդուող յուշարձաններու փրկութեան՝ լուսանկարման, չափագրման և գէթ մոռացումէ փրկումի գործին:

ՈՐՊԷՍ ՅԱՒԵԼՈՒԱԾ

Բայց ես ամաչում եմ նայել երկնքին...

Իր պարտութեան դիմաց, Արմէն Հախնազարեանը մղկտացող սրտով է, որ կը խոստովանի՝ թէ... «ես ամաչում եմ նայել երկնքին»... Ով որ կը ճանչնայ Արմէն Հախնազարեանը, կը հասկնայ, թէ ինչո՞ւ այս հայ մեծ ճարտարապետը եւ եկեղեցիներու ճարտարապետութեան ախոյեանը, ամբողջ արեւմտեան Հայաստանը, Կիլիկիան, Քելբաջարը մատներուն պէս ճանչցող ուղեւորը, արուեստագէտ լուսանկարիչը, Գերմանիոյ համալսարաններու մէջ փնտռուած քաղաքաշինութեան վարպետը, չի կրնար աչքերը երկինք բարձրացնել. կ՚ամչնայ, կ՚ամչնայ իբրեւ հայ, կ՚ամչնայ իբրեւ արուեստի մարդ, կ՚ամչնայ, պարզապէս իբրեւ մարդ:

Գրեթէ իր աչքերուն առջեւ, անցնող հոկտեմբեր 15-ին, Լոնտոնի Քրիսթիզ ընկերութեան սրահին մէջ, auctioner-ի մուրճին մէկ հարուածով դարձեալ գետին ինկաւ Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի տաճարին մայր դուռը, որ 70 տարի ինքզինք պահեց Մշոյ մէջ, գաղտնաբար ապրեցաւ Պոլիս, Ֆրանկֆուրտ, օրին մէկը ստրուկի պէս ծախուելու համար Անգլիոյ մէջ:

Կողբանք Եագութիէի եկեղեցւոյ մզկիթացումը, իրարու վրայ մեղադրանքներ կը բանաձեւենք, յանցաւորներ կը փնտռուին Փարիզէն Լոս Անճելըս: Ո՞վ պիտի ողբայ մեզ՝ որ տէր չդարձանք մեր ամենէն նշանաւոր ուխտավայրին՝ Չանկլիի Ս. Կարապետի դրան, որ 50,000 տոլարով անհետ կորսուեցաւ՝ ոչ հայ հաւաքածոյ պահողի մը դարաններուն մէջ, փոխանակ դառնալու Անթիլիասի նոր թանգարանի զարդը եւ կամ երթալու եւ եղբայրանալու՝ Երեւանի պետական թանգարանին մէջ, իր ժողովուրդի գրկին մէջ ապրող Մշոյ Առաքելոց վանքի դրան հետ:

Ասոր համար է, որ Արմէն չի կրնար երկինք նայիլ: Մեզմէ շատեր պէտք է նոյնքան ամչնան եւ իրենց աչքերը երկինք չբարձրացնեն:

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
Նիւ Եորք, ԱՄՆ

Հորիզոն, Գրական յաւելուած,
ԺԳ. տարի, թիւ 3 (151), մարտ 1997

ԱՐՄԷՆ ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ
1941 - 2009

Ծնած է Թեհրան, Իրան, 5 մայիս 1941-ին։

1959-ին Արմէն կ՝աւարտէ իր ուսումը հայկական Քուշեշ Դաւիթեան վարժարանին մէջ, Թեհրան։

1969-ին ճարտարապետութեան դոկտորի տիտղոսը կը ստանայ Ախընի համալսարանէն, Գերմանիա։ 1968-ին Արմէն Հախնազարեան կը սկսի իր ուսումնասիրութեան հայ ճարտարապետութեան մասին Արտազի շրջանի Սուրբ Թադէոս վանքի չափագրութեամբ (ներկայիս Մակուի շրջան, Իրան)։

1970-ական թուականներուն, Արմէն Հախնազարեան վեց հետախուզական ուղեւորութիւններ կը կատարէ Արեւմտեան Հայաստան, իւրաքանչիւրը մօտաւորապէս երկու ամիս տեւողութեամբ։ Հետագային, սակայն, թուրք կառավարութիւնը կ՝արգիլէ իր մուտքը Արեւմտեան Հայաստան, որպէս անբաղձալի անհատ (persona non grata)։

Հակառակ ատոր, մինչեւ իր անժամանակ մահը ան կը շարունակէ իր ուսումնասիրութիւնները՝ ուրիշ ճարտարապետներ ուղարկելով Արեւմտեան Հայաստան, Փոքր Հայաստան եւ Կիլիկիա։

1973-ին Արմէն Հախնազարեան կ՝ամուսնանայ ճարտարապետ Margrit Buenemann-ի հետ եւ կ՝ունենան երկու զաւակներ՝ Թալին եւ Շահրիզ։

1974-ին Թեհրանի մէջ կը հիմնէ Monit Ճարտարապետական ընկերութիւնը։

1982-ին պաշտօնապէս կը հիմնէ Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հասարակական կազմակերպութիւնը (Research on Armenian Architecture) (RAA)։

1983-ին Հախնազարեան կը սկսի դասաւանդել Ախընի համալսարանի Քաղաքաշինութենա բաժինին մէջ, ուր կ՝ուսուցանէ երկար տարիներ։

Արմէն Հախնազարեան կը մահանայ 19 փետրուար 2009-ին Ախընն քաղաքին մէջ, Գերմանիա։ Իր աճիւնէն մաս մը կը հանգչի Արագածոտն մարզ Արտաշաւան գիւղի գերեզմանատան մէջ, Հայաստան։

Յ.Շ.



ՍԱՄՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
1961 - 2020

Յուշարձանագէտ, պատմաբան, մշակութաբան, բանահաւաք, հայոց լեզուի անկուն պաշտպան Սամուէլ Կարապետեան, արմատներով Արճեշ գաւառի Բերդաղ գիւղէն, ծնած է Երեւան, աւարտած է Միսաք Մանուշեանի անուան թիւ 48 դպրոցը։ 1975-ին սկսած է ուսումնասիրել Խորհրդային Հայաստանի բնութիւնը, իսկ 1978-էն սկսեալ հետազօտած, լուսանկարած, չափագրած, տեսագրած եւ նկարագրած է հա-զարաւոր հայկական յուշարձաններ ամբողջ պատմական Հայաստանի տարածքին։ Ան գործակիցն էր Արմէն Հախնազարեանի։

Ատրպէյճանի, Թուրքիոյ եւ Վրաստանի կողմէ հայկական յուշարձաններու ոչնչացման փաստերը Սամուէլ Կարապետեան 2007-ին ներկայացուցած է Միացեալ Նահանգներու գոնկրեսին, իսկ 2008-ին՝ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարա-նին Լահէի մէջ։

Ան նախագահն էր Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող հիմնադրամին (Երեւան)։

Հեղինակը կամ խմբագիրն է 25 արժէքաւոր գիրքերու եւ բազմաթիւ աշխատութիւններու։ Հիմնադիրը, խմբագիրն ու հրատարակիչն էր հայկական ճարտարապե-տութեան նուիրուած «Վարձք» հանդէսին, որուն առաջին թիւը ձօնած էր Արմէն Հախ-նազարեանին։

Ան արժանացած է Հայաստանի Հանրապետութեան նախագահի մրցանակին եւ Արցախի Հանրապետութեան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին։

Այցելութիւն Դռան

« Բայց ես ամաչում եմ նայիլ երկնքին .....»

Մեսրոպ արք. Աշճեան «Որպէս յաւելուած» հրատարակած էր իր գիրը՝ Արմէն Հախնազարեանի «Դուռը» գրութեան հրատարակութեան առիթով, Հորիզոն շաբաթաթերթին մէջ 1997 մարտին։

Սակայն լուսահոգի Մեսրոպ Սրբազանի ճիգերը հոն չէին կանգ առած։ Ան իր կապերուն շնորհիւ կրցած էր ստուգել թէ Դուռը վաճառուած էր եւ տեղ գտած Թոմսոն ընտանիքի արուեստի եւ հնութիւններու հաւաքածոյին մէջ՝ Թորոնթօ։

Մեսրոպ Սրբազան 1997 սեպտեմբեր 11-ին նամակ մը ուղարկած էր պ. Տէյվիտ Թոմսոնին, որուն իբր պատասխան այս վերջինը հոկտեմբեր 2-ին գրած էր Սրբազանին՝ համաձայնելով որ Դռան այցելութիւն մը կարգադրուի։

Այդ նամակը Մեսրոպ Սրբազան ուղարկած էր ստորագրեալիս, որպէսզի կարենամ կազմակերպել այդ այցելութիւնը։

Նոյն տարուան հոկտեմբեր 23-ին ես ձեռագիր նոթ մը ուղարկեցի պ. Թոմսոնին՝ Արամ Ա. Վեհափառի եւ Մեսրոպ Սրբազանի Թորոնթօ այցելութեան առիթով՝ խնդրելով որ ժամանակ մը ճշդենք այցելելու եւ Դուռը տեսնելու։

Ժամանակը ճշդուեցաւ Հոկտեմբեր 31-ին։

Այդ օրը Մեսրոպ Սրբազանին հետ այցելեցինք պ. Թոմսոնի բնակարանը՝ Ֆորեստ Հիլ թաղամասին մէջ, Թորոնթօ։

Դրան զոյգ փեղկերը զետեղուած էին պատուանդանի մը վրայ, տան հիւրասենեակէն դէպի պարտէզ ելքին եւ ցուցադրուած՝ որպէս արուեստի գործ։

Մենք յուզումով դիտեցինք Դուռը, քանդակուած պատկերները եւ կարդացինք վրայի փորագրուած գրութիւնները։ Ապա Մեսրոպ Սրբազանը բացատրեց տան տիրոջ, որ այս Դուռը շատ կարեւոր եւ պատմական նշանակութիւն ունի մեր եկեղեցւոյ համար, եւ եթէ օր մը պ. Թոմսոն որոշէր բաժնուիլ անկէ, կը խնդրէինք, որ ան մեզի տեղեկացնէ, որպէսզի զայն տեղաւորենք մեր եկեղեցական թանգարաններէն մէկուն մէջ՝ Անթիլիաս կամ Էջմիածին։

Սրբազանը եւ ես նկարուեցանք Դռան քով եւ բաժնուեցանք պ. Թոմսոնէն։ Ան խոստացաւ, որ եթէ որոշէ Դռնէն բաժնուիլ, առաջին հերթին Սրբազանին պիտի տեղեկացնէ։

Ինչպէս ծանօթ է, 2019-ին Դուռը, Հայ եկեղեցւոյ արուեստի բազմաթիւ այլ գործերու հետ, ցուցադրուեցաւ Նիւ Եորքի Մեթրոփոլիթըն արուեստի թանգարանին մէջ։

Ցուցադրութեան աւարտին՝ Դուռը վերադարձած է Թոմսոնի հաւաքածոյին՝ Թորոնթօ։

Մեր յոյսն ու ջանքն է, որ Թոմսոններէն արտօնութիւն ստանանք Դուռը Թորոնթոյի Հայ կեդրոնին կամ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ եւս ցուցադրելու, որպէզի մեր ժողովուրդը եւ ընդհանրապէս Թորոնթոյի հանրութիւնը առիթը ունենան վայելելու եւ գնահատելու անոր գեղեցկութիւնը ։

Յարութիւն Շիթիլեան
2020 փետրուար 20



Մշոյ Ս. Կարապետ (Ինանակնեան, Գլակավանք) վանքը հարաւ-արևմուտքէն 1910-ականներուն և վանքի մնացորդները 2006-ին
Լուսանկարները՝ Սամուէլ Կարապետեանի «Եղեռն եղեռնից յետոյ» գիրքէն

The monastery seen from the south-west, around 1910 and the remnants in 2006
(Photos by Samvel Karapetian)